ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ԳՀԱՊՁԲ-20-23/1-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 23.04.2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության գլխավոր տնօրեն Ռ. Աղաբեկյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, հիմք ընդունելով 07.11.2019թ. կնքված № ԳՀԱՊՁԲ-20-23/1-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.13 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի № 1 Հավելվածով նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագիրի № 1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի ապրանք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի յուրաքանչյուր միավորի գինը ներկայացված է Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 900000 (ինը հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.2 կետին համապատասխան, բայց ոչ ուշ քան 10.12.2020թ.:

3. Այլ պայմաններ

3.1. Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի № 1 և № 2 Հավելվածները՝ բաղկացած են 1 թերթից, հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՋՈՒ ավիացիայի վարչությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Էներջի Գրուպ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5	ՀՀ, ք. Երևան, Ադոնցի 10
ՀՀ ՖՆԱ գործառնական վարչություն	«Կոնվերս բանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 1930066779600100
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 00115851
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ	Գլխավոր տնօրեն
Ն. ՅՈԼՉՅԱՆ	Ռ. ԱՂԱԲԵԿՅԱՆ

Հավելված N 1
№ ԳՀԱՊՁԲ-20-23/1-1 գնման պայմանագրի N 1 համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկան	Չ/մ	Քանակը	Միավորի գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր գումարը /ՀՀ դրամ/	Ապրանքների մատակարարումը 2020թ. 3-րդ եռամսյակ
1	Հատուկ մասնագիտական սարքեր և նյութեր (ղեկապտուտակի ականոցի կոթի առանցքակալի առանցքային խաղի ստուգման հարմարանք 6360-714)	հատ	2	450000	900000	

Հավելված N 2
№ ԳՀԱՊՁԲ-20-23/1-1 գնման պայմանագրի N 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/հ	Գնման առարկան	CPV կոդը	Նախատեսվում է ֆինանսավորել 2020թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2020թ., ընդ որում՝					
			հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	Հատուկ մասնագիտական սարքեր և նյութեր (ղեկապտուտակի ականոցի կոթի առանցքակալի առանցքային խաղի ստուգման հարմարանք 6360-714)	35121340/506	900000	900000	900000	900000	900000	900000

Ծանոթություն՝ Վճարման ենթակա գումարը ներկայացված է առողջական կարգով:

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Էներջի Գրուպ» ՍՊԸ գլխավոր տնօրեն

Ռ. ԱՂԱԲԵԿՅԱՆ